



# Ազգարարության Trumpet's Sound **Վոդ**

50-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՄԱՅԻՆ - ԳՈՐԻՆ 2019



# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: [pastor@armenianbrethren.org](mailto:pastor@armenianbrethren.org)  
URL: [www.acmaust.org](http://www.acmaust.org)

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի անուշ բույրը ..... Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Աբրահամը՝ իննսունիներ տարեկանում..... Դոն Սթորմըր

Ինչպե՞ս կարդալ Աստվածաշունչ երեխաների հետ ..... Մանկանց ավետ. ընկ.

Խոսքի մարդի՞կ ..... Ռեքս Տիրլալ

Տիրոջը հանձնի՞ր ճամփադ ..... Քաղված

Եկեղեցու պատմությունը (6) ..... QMBC պանորամա

Վկայություն ..... Վիգեն Խաչատուրյան

Հույս՝ անհույսների համար..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մահից հետո..... Քաղված

Խաղաղություն ..... Քաղված

Սեր, խնդություն, խաղաղություն..... Վեր. Հասիպ Ալյանահի

Զիջող հավատացյալը..... Քաղված

## **Քրիստոսի անուշ բույրը**

«Որովհետև, մենք Աստծո առջև Քրիստոսի անուշ բույրն ենք՝ նրանց մեջ, որ փրկված են, և նրանց մեջ, որ կորչում են»

**Վ**երջերս անընդհատ խորհում էի այն մասին, թե ի՞նչն է Քրիստոսի անուշ բույրը, և ինչպե՞ս մենք՝ որպես հավատացյալներ, կարող ենք լինել այն:

Քրիստոսի փառքն ու գեղեցկությունը բազմաթիվ ձևերով կարող ենք նկարագրել, սակայն սուրբգրության մեջ ամենագեղեցիկներից մեկն «անուշահոտ պատարագ» արտահայտությունն է (Եփես. 5:2):

Հին Կտակարանում շատ ենք կարդում, որ զոհաբերությունների անուշահոտությունը Տիրոջ համար հաճելի էր: Մեր սիրելի Հիսուսը դարձավ այդ զոհաբերությունը և Աստծո մոտ բարձրացող անուշահոտությունը:

«Եվ սիրո մեջ քայլեցեք, ինչպես Քրիստոսն էլ մեզ սիրեց և Իր անձը մեզ համար տվեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ լինելով Աստծուն» (Եփես. 5:2):

Քանի որ Աստված սիրում է Քրիստոսի զոհաբերության անուշահոտությունը, Նա նաև ուզում է, որ այն տարածվի ամբողջ աշխարհով: «Մենք Աստծո առջև Քրիստոսի անուշ բույրն ենք»:

Երբ խաչված Քրիստոսը քարոզվում է, ապա այդ անուշահոտությունն Աստծո համար հաճելի է լինում: Մա այն պատգամն է, որ ամբողջ աշխարհը կարիք ունի լսելու: Ուստի մեր՝ քրիստոնյաներիս մասին ասվում է, թե Աստծո առջև «Քրիստոսի անուշ բույրն ենք»:

Պողոսը սովորեցրեց, որ հավատացյալներն ազգերի մեջ Քրիստոսի բուրմունքն են:

Այսօր Քրիստոսի անուշահոտությունը շարունակ տարածվում է ամբողջ աշխարհով՝ հասնելով բոլոր այն վայրերը, որտեղ քարոզվում է Ավետարանը, և շատերը դարձի են գալիս որպես Նրա շնորհի անուշ բույր:

Այո՛, Քրիստոսի անուշահոտությունն ամենացանկալին է, քանի որ Նա Իր կյանքը տվեց խաչի վրա և գոհվեց աշխարհի մեղքերի համար: Աստծո բարկությունը բավարարվեց Քրիստոսի գոհաբերության մեջ: Աստված այդ անուշահոտությունն ընդունում է նրանցից, ովքեր Իր Որդու միջոցով գալիս են Իր մոտ փրկության համար:

Իսկ ի՞նչ ասենք մեր մասին: Ինչպիսի՞ անուշահոտություն ունենք: Արդյոք Քրիստոսը կենդանի՞ է մեր կյանքում, արդյոք մարդիկ տեսնո՞ւմ ու շնչո՞ւմ են Նրա բույրը մեր մեջ:

Թող մեր սիրելի Հիսուսը լուսավորի մեր կյանքը, թող Նրա ԽՈՍ-ՔԵՐԸ, ԳՈՐԾԵՐԸ, ՄԻՏԶԸ և ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹՅՈՒՆԸ մեր մեջ բնակվեն, որպեսզի ուրիշները, դրանք տեսնելով, փառավորեն մեր Երկնային Հորը:

Հ. Գ.

## **Աբրահամը՝ իննսունինը տարեկանում (Կարդացե՛ք Ծննդոց 17-րդ գլուխը)**

**Ս**ուրբգրությունը 13 տարվա ժամանակահատված բաց է թողնում, մինչև Աստծո՝ Աբրահամի հետ խոսելու մեկ այլ դրվագի անդրադառնալը: Երբ Նա խոսեց, մեծ խոստումներ տվեց Աբրահամին ու նրա սերնդին:

Սեզ համար հետաքրքրական է իմանալ, թե այդ 13 տարվա լռության մեջ ինչեր տեղի ունեցան: Գիտենք, որ Աբրահամն ու Սառան զավակ չունենալու խնդրի լուծումն իրենց ձեռքը վերցրին և այդպես անելով՝ հեռացան Աստծո կամքից: Աբրահամն ու Սառան ինքնուրույն փորձեցին ընտանիք կազմել: Աբրահամը Տիրոջ կամքը չփրկարեց նախքան Հազարին որպես կին ունենալը: Հատկանշական է, որ Աստված սպասեց, մինչև որ բոլորի համար պարզ դարձավ, որ Աբրահամն ու Սառան սեփական ջանքերով չկարողացան լուծել իրենց խնդիրը, և միայն այդ ժամանակ Աստված միջամտեց: Մարդկայնորեն նրանք չէին կարող զավակ ակնկալել այդ տարիքում:

Համբերությամբ սպասելը դաս է, որ բոլորս կարիք ունենք սովորելու: Մենք ինչ-որ բանի համար աղոթում ենք և պատասխանն ուզում ենք անմիջապես ստանալ: Կամ հավատում ենք, որ Աստված ինչ-որ բան խոստացել է մեզ, և անմիջապես ուզում ենք ունենալ այն: Մենք ուզում ենք ստանալ այնպիսի բաներ, որոնք փափագում ենք անել և դրանց մեջ գործունյա գտնվել: Սակայն երբեմն Աստված ուզում է, որ սպասենք նախքան մեզ մեր խնդրածը տալը: Գուցե Նա ուզում է, որ համբերություն սովորենք: Կամ գուցե մեզ սովորեցնում է ավելի վստահել Իրեն և ավելի քիչ վստահել մեր անձին:

Տերն Աբրահամին երևաց, երբ նա 99 տարեկան էր, և նրան չորսկետանոց պատգամ տվեց.

- **Ես եմ ամենակալ Աստվածը:** Աստված Իրեն նոր կերպով հայտնեց Աբրահամին: Երբ Աբրահամը Մեքիսեդեկին հանդիպեց, սովորեց, որ Աստված Բարձրյալ է, երկնքի ու երկրի տիրակալն է: Այժմ նա սովորում է, որ Աստված էլ Շաղդայն է՝ ամենակարող, ամենագոր Աստվածը:

Աստծո այս հայտնությունը կարևոր է բոլորիս համար: Մենք չպետք է բավարարվենք մեր իմացած փոքր տեղեկությամբ: Ավելին՝ մենք Աստծուն ճանաչելու և Նրա հետ սերտ հարաբերություն ունենալու խիստ կարիք ունենք: Նախքան խաչը բարձրանալը, Տերն աղոթեց նրանց համար, ովքեր հավիտենական կյանք պիտի ստանան, որ ճանաչեն միակ ճշմարիտ Աստծուն և Հիսուս Զրիստոսին, որին Նա ուղարկեց: Մեր պատասխանատվությունն ու ուրախությունն է Աստծուն ավելի լավ ճանաչելը:

- **Իմ առաջ քայլի ու կատարյալ եղիր:** Պատճառն այն է, որ Աբրահամն անարատ կերպով չգործեց, երբ Հագարին իբրև կին վերցրեց: Ինքը և իր կինը՝ Սառան, չպետք է փորձեին իրենց կյանքի խնդիրները սեփական ջանքերով լուծել և իրենց, ինչպես նաև ուրիշների կյանքում ավերածություն ստեղծել: Երկրորդ բայը թարգմանված է «կատարյալ»: Սա Աստծո առջև քայլելու պատվերին հնազանդվելու հետևանքն է, որ նշանակում է գիտակցաբար ապրել Տիրոջ ներկայության մեջ:

Հարցն այն է, թե ինչպե՞ս կարող ենք կատարյալ կամ անարատ լինել: Որոշ թարգմանություններ ասում են. «Առջևս քայլիր ու կատարյալ եղիր»: Սա անհնար առաջադրանք է: Աստված Աբրահամից չէր ակնկալում մեղք չգործել: Բայց ակնկալում էր, որ Աբրահամն Իրենից կախված մնար ու չփորձեր սեփական ուժերով լուծել իր կյանքի խնդիրները:

- **Կհաստատեմ Իմ ուխտը Իմ ու քո միջև:** Չնայած ձախողությանը՝ Աստված Աբրահամի մասին հոգ տարավ, նաև հաստատեց նրա հետ Իր կնքած ուխտը: Աստված էր, որ ուխտ կնքեց նրա հետ:

Երբ մեր մասին ենք մտածում, գիտակցում ենք անսահմանափակ օրհնությունները, որոնք տրվում են մեզ մեր Տեր Հիսուսով և Գողգոթայի վրա Նրա մահվամբ ձեռք բերված Ուխտի միջոցով: Ուխտի հիմքը հաստատված է Նրա մահով. մենք դրա օրհնությունը վայելում ենք հավատքի միջոցով:

- **Քեզ խիստ շատ պտղաբեր եմ դարձնելու:** Այս խոստումը նախ քաղղեացիների Ուր քաղաքում տրվեց. Աստված միշտ պահում է Իր խոստումը:

Աստծո խոստումներն անվրեպ են: Այդ ժամանակ Աբրահամն առաջնորդեց իր փոքր ընտանիքը. ինքն էր, Սառան և Իսմայելը: Անկախ այն բանից, թե որքան դժվար է այն իրավիճակը, որի մեջ գտնվում ենք, մեր պատասխանատվությունն է հավատալ, որ երբ Աստված խոստանում է, կարող է անել այն, ինչ ասել է: Նա հավատարիմ է մնում Իր Խոսքին:

Երբ Աբրահամը Տիրոջ ձայնը լսեց, արեց այն միակ բանը, որ կարող էր անել Ամենակարողի ներկայության մեջ: Նա իր երեսի վրա ընկավ: Աստված շարունակեց Իր պատգամը Աբրահամին: Նա արդեն Աբրահամի հետ ուխտ էր կապել. այժմ Տերը վերահաստատեց այն՝ ասելով, որ նա բազում ազգերի հայր է լինելու: Այս ճշմարտությունը նշանակում էր, որ Աստված Աբրահամի անունը Աբրահամի էր փոխելու: Նա ազգերի բազմության հայր պիտի լիներ: Հետաքրքրական է իմանալ, թե այդ տարածքում բնակող մարդիկ ինչպե՞ս ար-

ձագանքեցին այս ճշմարտությանը: Արդյոք հեզանքո՞վ մոտեցան: Ի՞նչ էին մտածելու մի մարդու մասին, որը միայն մեկ որդի ուներ՝ Իսմայելը, որին ազգերի բազմության հայր լինելու խոստումն էր տրվել, երբ նա մոտավորապես 100 տարեկան էր:

Աստված վերահաստատեց խոստումները, որոնք 13 տարի առաջ տվել էր Աբրահամին: Նա հաստատեց դրանք՝ տալով ուխտի նշանը: Աստված Աբրահամի հետ անպայմանական ուխտ կապեց և այժմ նրան պատվիրում էր ինչ-որ բան անել:

Աստված Աբրահամին հրահանգեց, որ իր տան մեջ գտնվող յուրաքանչյուր արու թլփատվի: Նրա ընտանիքի անդամները, նաև ծառայության համար ստակով ծախու առնվածները պետք է թլփատվեին: Այդ օրից ի վեր ութ օրական յուրաքանչյուր արու պետք է թլփատվեր:

Գուցե մտածե՞նք, թե ի՞նչ կապ կա այս հրահանգի ու ավելի վաղ կնքված ուխտի միջև: Սա նոր ուխտ չէր: Աստված երկիրը Աբրահամին տալու խոստումը պահողն էր: Սա անպայմանական էր: Սակայն Աբրահամը պետք է ցույց տար, որ ինքն ընդունել է Աստծո գերիշխանությունն իր կյանքի վրա և ապրում է Նրա առաջնորդության ներքո: Նա չպետք է ապրեր իր ուզած ձևով, այլ պետք է ցույց տար, որ պատկանում է միակ ճշմարիտ Աստծուն:

Մինչ մտածում ենք այս բաների մասին, գիտակցում ենք, որ նույնն է նաև մեր պարագայում: Փրկության աշխատանքն ամբողջությամբ Աստծո գործն է: Չկա ոչ մի բան, որ արեցինք կամ կարող ենք անել: Աստված է պահում մեզ մինչև մեր Տեր Հիսուսի ներկայության մեջ գնալը: Սակայն սա չի նշանակում, թե կարող ենք ապրել այնպես, ինչպես ուզում ենք: Սա Տեր Հիսուսի պատգամն էր Իր աշակերտներին, երբ նրանց հետ էր վերնատանը: Նա ասաց. «Իմ մեջ մնացե՛ք»:

Դոն Սթրոմըր



## **Ինչպե՞ս կարդալ Աստվածաշունչ երեխաների հետ**

**Պ**ատմության ընթացքում եկեղեցիներում երեխաներին ուսուցանելու համար օգտագործվել է Աստվածաշունչը, որը հավատում ենք՝ գրել են Աստծո մարդիկ՝ ներշնչված Սուրբ Հոգուց:

Եղել են նաև դեպքեր, երբ երեխաներին հասկանալի դարձնելու համար, Աստվածաշնչից վերցրել են հատվածներ, պատմություններ, նկարազարդել և առանձին հրատարակել: Սա արվել է երեխաներին մատչելի դարձնելու համար:

Դեռ հինկտակարանյան ժամանակաշրջանում տեսնում ենք, որ Տիրոջից ունենք պատվեր, հատկապես ծնողներին՝ հոգալու այն մասին, որ երեխաները հասկանան Սուրբ Գրքերը:

Բ Օրինաց 6:6-9. «Եվ այս խոսքերը, որ Ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն, ջանասիրաբար ուսուցանի՛ր դրանք քո որդիներին, խոսի՛ր դրանց մասին քո տանը նստածդ ժամանակ և պառկելիս, և վեր կենալիս: Եվ դրանք որպես նշան կապի՛ր ձեռքիդ վրա, դրանք թող ճակատնոց լինեն աչքերիդ մեջտեղում: Նաև քո տան դրանդիքի վրա և դռներիդ վրա գրի՛ր դրանք»:

Աստված հատակ հանձնարարություն տվեց ծնողներին.

- անձնապես ճանաչել Աստծուն,
- Տիրոջը սիրել ողջ սրտով,
- Աստծո Խոսքը լավ իմանալ:

Այս պատվերը ենթադրում է երեխաներին այնպես սովորեցնել Աստծո Խոսքը, որ այն մտնի նրանց սիրտը՝ ձևավորելով նրանց մրտաժելակերպը, որ նրանց կյանքի սկզբունքները համապատասխանեն Աստծո Խոսքին:

Երեխաների վրա մեծ ազդեցություն ունի, թե որպես ծնող ինչ վերաբերմունք ունես Աստվածաշնչի նկատմամբ, մինչ տանը ընթեր-

ցում, ուսումնասիրում, խորհրդածում ես երեխաների հետ Աստծո խոսքը: Երեխաներն ավելի արագ ընդօրինակում են այն, ինչ տեսնում են, քան այն, ինչ լսում են:

Քեթ սիրում ես Աստծուն, պատվում ես Նրա խոսքը, կկարողանաս զավակներիդ սովորեցնել, թե ինչ պատվերներ ունի Տերը մեր կյանքի տարբեր ոլորտների և իրավիճակների վերաբերյալ:

Հաճախ ծնողներն իրենց զավակների հետ հարատևորեն կարողում են Աստվածաշունչը, սակայն իրենց վարքով այլ պատգամ են փոխանցում:

Երեխաների հետ Աստվածաշունչ կարդալու և դրա մասին մտորելու համար նախ ինքդ պետք է լավ իմանաս Աստծո խոսքը, հետո փորձես այն ավելի հասկանալի ձևով բացատրել երեխային:

Կարելի է օգտագործել նաև քրիստոնեական գրականություն, որոնք նախատեսված են երեխաների համար, որոնցում աստվածաշունչյան ճշմարտությունները ներկայացված են պարզորեն:

Որպես ծնող կամ Կիրակնօրյայի ուսուցիչ՝ ունեցի՛ր Աստծո հետ մտերիմ հարաբերություն, որ սովորեցնեք այն Աստծո մասին, ում ճանաչում եք, հնազանդվում եք Նրա խոսքին, որ ձեր սովորեցրածը ազդեցություն ունենա երեխայի անձի ճիշտ ձևավորմանը:

### Մանկանց ավետարանչության ընկերակցություն

---

«Ականջ դիր, ո՛վ Իսրայելի Յովիվ, Դո՛ւ, որ առաջնորդում ես Յովսեփին, ինչպես հոտ. Դո՛ւ, որ բնակվում ես քեռովբեների միջև, փայլի՛ր: Եփրեմի ու Բենիամինի և Մանասեի առջև արթնացրո՛ւ Քո զորությունը ու արի՛, փրկի՛ր մեզ: Մեզ ե՛տ դարձրու, ո՛վ զորությունների Աստված, և Քո երեսը փայլեցրո՛ւ, և մենք կփրկվենք: Ո՛վ Տեր, զորաց Աստված, մինչև ե՞րբ ես բարկանալու Քո ժողովրդի աղոթքի վրա: Արտասուքի հաց ես կերցնում նրանց ու մեծ չափով արտասուք ես խմեցնում նրանց: Մեզ կռվի առարկա ես դարձնում մեր հարևանների առաջ ու մեր թշնամիները ծիծաղում են մեզ վրա: Կրկին դեպի մեզ դարձի՛ր, ո՛վ զորաց Աստված, և Քո երեսը փայլեցրո՛ւ, ու կփրկվենք» (Սաղմոս 80:1-7):

## Խոսքի մարդի՞կ

Որոշ ժամանակ առաջ քրիստոնյաների շրջանակում կատարված ոչ պաշտոնական վիճակագրություն կարդացի: Մի քանի տասնյակ հավատացյալների հարցրել էին, թե իրենց անձնական օգուտի համար շաբաթը քանի՞ անգամ են Աստվածաշունչ կարդում: Միջին հաշվարկը ցույց տվեց, որ շաբաթական ինը թույն էր հատկացվում դրան: «Ոչ էլ Նրա շրթունքների պատվիրաններից շեղվեցի. Նրա բերանի Խոսքերն իմ կարիքներից ավելի կարևոր համարեցի» (Հոր 23:12): Հորի համար Աստծո Խոսքերն ավելի արժեքավոր էին, քան իր հանապազորյա հացը, բայց ինձ թվում է՝ մեզանից շատերն իրենց օրերն անցկացնում են առանց Աստվածաշնչին մոտենալու: Չարմանում են՝ ինչո՞ւ է այդպես:

Սկսեցի մտածել այն պնդման մասին, որը սիրում ենք կիրառել ինքներս մեզ համար՝ ասելով, թե «Խոսքի (Աստվածաշնչի) մարդիկ ենք»: Մտածեցի նաև Մերձավոր Արևելքում գտնվող քոլեջի մասին, որ իսլամական կրոնական առաջնորդներ է պատրաստում: Նախքան քոլեջ ընդունվելը դիմորդը պետք է անգիր իմանա ամբողջ Գուրանը: Գուրանը մոտավորապես Նոր Կտակարանի չափ է:

Մենք պնդում ենք, որ մեր եկեղեցիները և մեր կյանքը կառուցված են Աստվածաշնչի ուսմունքի վրա: Ես մեծ ոգևորություն եմ ապրում, երբ հանդիպում եմ երիտասարդների, որոնք ոչ միայն հետաքրքրված են Աստծո Խոսքով, այլև իրենց կյանքը կառուցում են դրա վրա: Այնուամենայնիվ, անհանգստանում եմ, երբ փորձում եմ հասուն տարիքի մարդիկ գտնել, որոնք, ինչպես Հորը, զգում են, թե չեն կարող գոյատևել առանց Աստծո Խոսքին իրենց կյանքում մեծ տեղ տալու: Չնայած որ բարձր եմ գնահատում հանրային քարոզչության դերը, սակայն համոզված եմ, որ յուրաքանչյուր անձ, որի համար աստվածաշնչյան ուսուցման միակ միջոցը կիրակնօրյա քարոզն է, նա հաստատ դժվարության մեջ է: Այն էական է, բայց բավարար չէ: Մաղմոս 19-ում Գավիթն Աստծո Խոսքը նկարագրեց, որպես ուրախության, առաջնորդության և սնունդի աղբյուր: Նա խորապես քաղց

ուներ Աստծո Խոսքի նկատմամբ: Իմ հարցը հետևյալն է. «Ինչո՞ւ են երբեմն Աստծո Խոսքին մոտենում քրիստոնեական պարտականությունից դրդված, այլ ոչ թե Աստծուն ավելի լավ ճանաչելու փափագով»: Հիսուսն ասել է, որ մեր հոգևոր կյանքը կարող է հաստատվել միայն Աստծո բերանից ելած ամեն Խոսքով (Մատթ. 4:4):

Այսպես լավա՞ծ աշխարհում ապրելով՝ մենք անկասկած Աստծո և Իր Խոսքի հանդեպ ճշմարիտ քաղց պետք է զգանք, եթե իսկապես ուզում ենք հաստատվել Աստծո կողմից: Եթե իրականում տառապում ենք սովից, ապա ինչո՞ւ չենք զգում այդ: Արդյոք այնքան վատթարացե՞լ ենք, որ սովը չենք զգում: Գուցե կորցրե՞լ ենք այդ քաղցը, քանի որ կորցրել ենք իրական կարիքը տեսնելու մեր կարողությունը և խաբում ենք ինքներս մեզ՝ ասելով, թե ամեն ինչ լավ է: Եթե Աստվածաշունչը մեզ համար ուսուցման լավ աղբյուր է, որը սովորեցնում է, թե ինչպես պետք է վարվենք, և եթե զգում ենք, որ մեր վարքն ընդունելի է աշխարհային չափանիշներով, ապա Աստծո Խոսքի հանդեպ մեր կարիքի զգացումը զգալիորեն նվազում է: Բոլորս գիտենք, որ սա այսպես է:

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն Աստծո Խոսքը նկարագրում է որպես երկսայրի սուր, որը թափանցում է մինչև հոգու խորքը և «մտքերի ու սրտի խորհուրդների գննողն է» (Եբր. 4:12): Համոզված եմ ունեմ՝ սա նշանակում է, որ Աստծո Խոսքը քննում է ոչ միայն այն, ինչ անում ենք, այլև այն, թե ինչու ենք անում: Այն պահանջում է, որ անկեղծ մտածենք ու խորապես քննենք ոչ միայն մեր արածները, այլև այն, թե ով ենք ներքուստ: Սա նույնիսկ հասուն քրիստոնյայի համար սարսափելի կարող է թվալ: Ճշմարտությանը հանդիպելու ցավից թերևս փորձենք սանձել Աստծո Խոսքը կամ վերաբերվենք դրան՝ որպես վարդապետական գրության կամ քարոզների ու խորհրդածությունների աղբյուրի:

Երբ Աստծո Խոսքը սկսի կտրել հոգու այն պատրանքները, որոնցով փորձել ենք ապրել, այդ ժամանակ կսկսենք բացահայտել, թե որքան հրաշալի է Աստված, և կզգանք Նրա սիրո ճշմարիտ խորհուրդը: Սա ավելին է պահանջում, քան շաբաթը ինը րոպե տրամադրելը:

Ռեքս Տիրլավ

## Տիրոջը հանձնի՛ր ճամփադ

«Տիրոջը հանձնի՛ր ճամփադ ու Նրան վստահի՛ր, և Նա կիրազործի այն» (Սաղ. 37:5):

Եթե անկարգելավորը (պարաշյուտիստը) չհամարձակվի ցատկել, նա երբեք չի իմանա, թե ինչպես է աշխատում պարաշյուտը: Սկզբում նա պետք է ցատկի (սա ենթադրում է որոշակի վստահություն), և միայն այն ժամանակ կզգա՝ ինչպես է պարաշյուտը մեղմորեն իջեցնում իրեն: Քրիստոնյայի գործնական հավատը փաստորեն ոչնչով չի տարբերվում դրանից:

Եթե մենք չվստահենք Աստծո հավատարիմ նախախնամությանը մեր կարիքների համար, չենք իմանա, թե ինչպիսի ազդեցություն է այն թողնում մեր կյանքի վրա: Հաճախ համոզվում ենք, որ Աստծուն վստահելն իսկապես դժվար է: Կարծում ենք՝ մեզ ավելին է պետք, քան Ավետարանի խոստումները: Մենք կցանկանայինք ինչ-որ բան տեսնել, նույնիսկ փոքր, իսկ հետո հավատալ: Բայց չենք կարող զգալ այն ուժը, որով Աստված աջակցում է մեզ, եթե Նրան գործելու հնարավորություն չտանք:

Մեր հավատը պետք է քայլի փորձառությունից առաջ: Մենք չպետք է մանրակրկիտ հաշվարկենք այն ամենը, ինչ վերաբերում է ապագային, փորձենք կանխատեսել այն և լուծում գտնել: Մենք պարզապես պետք է վստահենք Տիրոջը: Իհարկե, պետք է իմաստուն լինել և ռացիոնալ գործել: Բայց ամեն ինչ պայմանավորված է մեր վարքով. վախենալով անորոշությունից (հաճախ դա Աստծո հանդեպ վստահության բացակայության պատճառով է)՝ կարող ենք մանրամասնորեն պլանավորել ամեն ինչ: Բայց կարող ենք նաև պատշաճ հարգանք ցուցաբերել Տիրոջը՝ խելամիտ քայլեր կատարելով և ամեն ինչ Աստծուն հանձնելով: Նա կհոգա մեր կարիքների մասին:

Քաղված

## **Եկեղեցու պատմությունը (6)**

**Մ.թ. 1517-2000թթ.**

1541 թ.-ին Կալվինը հրավիրվեց Ժնև: Նա վերանայեց քաղաքային օրենքները և ընդունեց դրանք: Նա նաև փորձեց բոլոր քաղաքացիներին եկեղեցու ուսմունքներին ենթարկել, հիմնադրեց Ժնևի ակադեմիան, որին միացան աստվածաբանականի ուսանողներ ամբողջ Եվրոպայից: Ժնևում նրա աշխատանքը հանգեցրեց Երիցական և Բարեկարգյալ եկեղեցիների ստեղծմանը և Անգլիայի ու Ամերիկայի Պուրիտանական շարժման աճին:

Կալվինի կյանքի ընթացքում և հետո կաթոլիկների և բողոքականների միջև շատ կատաղի մարտեր ընթացան: Դրանք շարունակական բնույթ ստացան 1562-ից մինչև 1598 թթ., երբ Ֆրանսիայի Հենրի IV-ը հրապարակեց Նանտի էդիկտ հրովարտակը: Սա երաշխավորեց պաշտամունքի ազատությունը, դպրոցական կրթության համակարգում կրոնական համայնքի ընտրությունը, համալսարանների և հիվանդանոցների ազատ մուտքն ու բողոքականների պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքը: Սակայն 1685 թվականին Լյուդովիկոս XIV-ը հրովարտակը չեղյալ հայտարարեց՝ հրահրելով կրոնական մարտեր: Սա հանգեցրեց բողոքականների զանգվածային արտաքսմանը Ֆրանսիայից Անգլիա, Հոլանդիա, Պրուսիա և Ամերիկա:

Մինույն ժամանակ Անգլիայի և Հռոմի միջև պայքար կար, որի գագաթնակետը եղավ 1534 թվականի Անգլիայի խորհրդարանի որոշումը, որով Հենրի VIII-ը նշանակվեց Անգլիայի եկեղեցու առաջնորդ: Չնայած կաթոլիկ հավատքի պահպանմանը, Անգլիայի եկեղեցին բաժանվեց Հռոմից:

Էդվարդ VI-ի (1547-1553 թթ.), Մարիամ I-ի (1553-1558 թթ.) և Էլիզաբեթ I-ի (1558-1603 թթ.) հաջորդական թագավորությունների ժամանակ մեկ բողոքականության և մեկ կաթոլիկության հետևելու միտումներ եղան: Մարիամի օրոք շատ բողոքականներ մարտիրոսվեցին, իսկ մյուսները փախան Ժնև: Սակայն երբ Էլիզաբեթը նստեց գահին, հալածանքն ավարտվեց, Անգլիայի եկեղեցին վերակազմավոր-

վեց և եկեղեցու կարգադրությամբ խորհրդարանը վավերացվեց:

Սակայն եկեղեցու ներսում կային այսպես կոչված «չհարմարվողներ»՝ Պուրիտականներ, որոնք շեշտում էին բարձր բարոյականության չափանիշները, եկեղեցական կարգապահությունը և եկեղեցական անդամակցության համար վերստին ծնունդի առկայությունը: Էլիզաբեթի թագավորության ժամանակ նրանք արագ տարածվեցին՝ պահանջելով Քրիստոսի և ոչ թե թագավորի կամ թագուհու՝ եկեղեցու առաջնորդ լինելու փաստը, նաև եպիսկոպոսների իշխանության հրաժարումը: Ի վերջո, նրանցից մի խումբ եկեղեցուց դուրս եկան և հայտնի դարձան Երիցականներ և Ժողովականներ անուններով:

Էլիզաբեթի թագավորության ավարտին հայտնվեցին Սկրտականները: Նրանք պահպանեցին Պուրիտականների շատ համոզմունքներ և պնդում էին եկեղեցու ու պետության տարանջատումը, ինչպես նաև հավատացյալների ջրի մեջ ընկղմմամբ մկրտությունը:

1603 թ.-ին Շոտլանդիայի Ջեյմս VI-ը դարձավ Անգլիայի Ջեյմս I-ը. 1611 թ.-ին նա մասամբ հաջողության հասավ Աստվածաշնչի «King James Version»-ի թարգմանության շնորհիվ: Այնուհետև եղան կրոնական պատերազմներ, որոնց հետևանքով Հոլանդիան, Մասաչուսեթսը և այլ վայրեր գաղութացան:

Շոտլանդիայում Ռեֆորմացիան սկսվեց վաղ 16-րդ դարում: Շարժման առաջին երկու առաջնորդները՝ Պատրիկ Հեմիլթոնը և Ջորջ Վիսսարտը, նահատակվեցին կաթոլիկների կողմից: Այնուհետև ազնվականների մի խումբ (հիմնականում կաթոլիկ) սպանվեցին կաթոլիկ առաջնորդ կարդինալ Բեթանի կողմից: Բայց կա ևս մեկը՝ Ջոն Նոքսը (1505-1572 թթ.), որի շնորհիվ շոտլանդական բարեփոխումները բորբոքվեցին:

Նոքսը նոր էր ավարտել իր համալսարանական ուսումը, սակայն հաշվի առնելով վտանգավոր հանգամանքները՝ նա փախավ Սենտ Էնդրեսի ամրոց, որտեղ բազմաթիվ բողոքականներ էին թաքնվում: Այնուհետև ֆրանսիացիները եկան և բոլորին գերի վերցրին, իսկ Նոքսին վաճառեցին որպես ստրուկի՝ նավի թիավար աշխատելու համար: Ծովում 19 ամիս անցկացնելուց հետո նա փրկվեց անգլիացի-

ների կողմից և սկսեց իր ծառայությունն Անգլիայում: Այնուհետև նա այցելեց Ֆրանկֆուրտ, Ժնև և վերջապես 1559 թ.-ին հաստատվեց Շոտլանդիայում: Այս ժամանակահատվածում Ռեֆորմացիան տարածված էր, սակայն կազմակերպման կարիք ուներ: Չնայած կաթոլիկ թագուհու բացակայությանը՝ Շոտլանդիայի խորհրդարանը հավանություն տվեց Շոտլանդիայի 1-ին հավատամքի ձևակերպմանը և հիմնադրվեց Շոտլանդիայի եկեղեցին 1560 թ.-ին: Նոքսի վախճանվելուց հետո բախում տեղի ունեցավ եպիսկոպոսական՝ եպիսկոպոսների կողմից կառավարվող և իշխանության Երիցական կողմի միջև, արդյունքում՝ երիցականությունը հաստատվեց:

1640-ից մինչև 1660 թթ. Մեծ Բրիտանիան ղեկավարվում էր Պուրիտականների կողմից. Օլիվեր Կրոմվելի (1599-1658 թթ.) գլխավորությամբ: Այս ընթացքում կազմվեց Վեստմինստերյան հավատամքը (վարդապետության համապարփակ հայտարարություն) և 1647 թ.-ին այն ընդունվեց որպես Շոտլանդիայի եկեղեցու վարդապետության հայտարարություն:

Նիդեռլանդներում Ռեֆորմացիայի առաջընթացը բազմաթիվ կոտորածներով էր ընթանում և ավարտվեց անկախության համար պայքարի ութսունամյա պատերազմից հետո: Ուստի պայքարը զուտ կրոնական չէր, այլ սոցիալական և քաղաքական: Բացի այդ, ներգրավված էին նաև իսպանական և անգլիական ուժերը: Ի վերջո, անկախությունը ձեռք բերվեց 1648 թ.-ին Վեստֆալյան հաշտության շնորհիվ, և հողանդական բարեփոխված եկեղեցին ձևավորվեց որպես Նիդեռլանդների ազգային եկեղեցի:

Նույնիսկ նախքան Լյութերի՝ Վիտենբերգի ամրոցի իննսուհինգ թեզերը դնելը 1517 թ.-ին պապականությունը մտահոգվում էր եկեղեցու վիճակով: Երբ բարեփոխումն սկսվեց, և մարդիկ սկսեցին լքել եկեղեցին, իրավիճակը լուրջ դարձավ: Քայլեր պետք է ձեռնարկվեին հոգևոր կյանքի և բարոյականության արտաքին կերպարը վերականգնելու համար:

Իգնատիոս դե Լոյոլան (1491-1556 թթ.) իսպանացի ազնվական էր, որ իր կյանքի վաղ շրջանում պրոֆեսիոնալ զինվորական էր: Ուտքի

վրա վերք ունենալու պատճառով նա որոշեց իր կյանքը նվիրել Քրիստոսին որպես Նրա զինվոր: Նրա սրտի վրա ծանրացած էր միսիոներական աշխատանքը, և այդ նպատակով նա ստեղծեց մի միաբանություն, որ հայտնի է որպես «Jesuits» (Հիսուսի միաբանություն): Սկզբում նրանց հիմնական նպատակներն էին՝ հեթանոսներին դարձի բերել, հերետիկոսության դեմ պայքարել և կրթությունը խթանել: Այդպես անելով՝ նրանք հավանաբար բարելավեցին հռոմեական եկեղեցու պատկերը: Այնուամենայնիվ, հետագայում դիմեցին պատերազմի և չար միջոցների՝ եկեղեցու շահերը տարածելու համար, և նույն նպատակը հետապնդելով՝ փորձեցին ազդել կառավարությունների վրա: Նրանք այնքան հզոր ու անբարո դարձան, որ պապականությունը ստիպված էր ճնշել նրանց 1773-1814 թվականներին:

Լյութերի կողմից բարձրացված հարցերը, ինչպես նաև Պապի մտահոգությունները լուրջ դեր խաղացին Տրենտի խորհուրդը հրավիրելու և այս ու այլ հարցերի մասին քննարկումներ անելու համար: Այս խորհուրդը հանդիպեց քսանհինգ նիստում, երեք հաջորդական Պապերի գահակալության ժամանակ՝ 1545-ից մինչև 1563 թվականները: Խորհուրդը, ի թիվս այլ բաների, պետք է հաստատեր, որ եկեղեցական յոթ խորհուրդները (բողոքականների մեծ մասը ընդունում է միայն երկուսը) վավեր են, և որ ավանդույթն առողջ հիմք է Աստվածաշնչի կողքին որպես հեղինակություն, և Հին Կտակարանի պարականոն գրքերը աստվածային ներշնչվածություն ունեն, քավարանը գոյություն ունի, և որ կարևոր է մեղքերը քահանային խոստովանելը: Խորհրդի կողմից ընդունված այս բոլոր հարցերը կազմեցին հռոմեական կաթոլիկ հավատքի մանրակրկիտ ուսուցումները:

(Շարունակելի)



## Վկայություն

1995 թ.-ի գարուն. Երևանի պետական բժշկական համալսարան: Կենսաբանության ամբիոնի ավագ դեկանը ուսումնական օրվա ավարտին (այդ ժամանակ նա մոտավորապես 60 տարեկան էր) կանչեց ինձ իր գրասենյակ՝ գրեթե մեկժամանոց զրույցի համար: Ինձ համար հեշտ չէր կանգնել ու հակադրվել Խորհրդային Միության գաղափարախոսությանը մեծացած և իր ամբողջ կյանքի ընթացքում Աստծո գոյությունը մերժած գիտնականին: Նա երբեք ինձ չէր դասավանդել կենսաբանություն առարկան, բայց լսել էր, որ լսարաններից մեկում Աստծուն հավատացող մի ուսանող կար: Նա խիստ մենատիրական, բայց միևնույն ժամանակ փխրուն անձնավորություն էր, որ հետաքրքրասեր էր և ուզում էր լսել: Մինչև հիմա հիշում եմ, թե ինչպես էր պայքարում գիտական տեսությունների վրա հիմնըված այն համոզմունքներով, թե մարդը կապիկից է առաջացել (ըստ Դարվինի հայտնի տեսության): Իր հարցադրումներից հասկացա, որ գտնվում է մոխրագույն տարածքում. ինչ-որ բան էր փնտրում, որը երբեք չէր համարձակվի անվանել իր իսկական անունով՝ ՃՇՄԱՐ-ՏՈՒԹՅՈՒՆ:

Տակավին հիշում եմ նրա դեմքի արտահայտությունը, որ մատնում էր ներքին շփոթությունը: Նա մի գիրք բացեց և ցույց տվեց, թե ինչպես է մարդը զարգացել կապիկից: Ես լսեցի նրան: Բացատրությունն ավարտելուց հետո նա ասաց. «Հիմա ուզում եմ քեզ լսել, տղա՛ս: Ապացուցի՛ր, որ Աստված կա»: Անկեղծ լինեմ. չեմ հիշում այն ամենը, ինչ ասել եմ նրան Աստծո և ստեղծագործության մասին, բայց չեմ կարող մոռանալ նրա տված հետաքրքիր հարցերը, որոնք ամեն անգամ թափվում էին գլխիս, երբ նրա հետ խոսում էի ճշմարտության մասին, որին այնքա՛ն ծարավ էր: Մի պահ զգացի, թե պատասխանում եմ երեխայի կողմից տրվող շատ հարցերի, որոնք անպատասխան էին մնացել: Դժվար էր բացատրել մարդեղացած Որդու ճշմարտությունը, երբ այս մարդը երբևէ չէր հավատացել, որ Աստված գոյություն ունի: Սակայն շնորհը միշտ հաղթում է: Ես կարող եմ միայն ճշմարտությունը պատմել, Արարիչ Աստծո ճշմարտությունը, մարդու

ընկած վիճակը, Քրիստոսով ցուցաբերված Աստծո սերը, խաչի ճշմարտությունը և հարության միջոցով Քրիստոսի տված հույսը: Ես նույնիսկ չէի գիտակցում, որ այդ պահին նրա անհավատության դեմ ջատագովում էի Քրիստոսի հանդեպ իմ հավատքը: Ի վերջո ինձ նայեց անկեղծ ժպիտով ու ասաց. «Տղա՛ս, ես չկարողացա համոզել քեզ, և դու նույնպես հաջողություն չունեցար ինձ համոզելու մեջ»: Սակայն հիշում եմ նրա վերջին «Երկա՛ր կաց, տղա՛ս» խոսքերը, երբ մոտեցա նրա գրասենյակի դռանը և զգացի, որ պատգամս հասել է նրան այդ արևոտ, պայծառ օրը: Պատգամը մնաց նրա խղճի վրա: Ես աղոթեցի նրա համար, երբ վերջին անգամ հանդիպեցինք այդ օրը:

Այսօր համացանցից տեղեկացա, որ նա իր կյանքի 77-րդ տարում կնքել է մահկանացուն (2014 թ.): Սա նշանակում է, որ Աստված նրան Քրիստոսի մասին վկայությունը լսելուց հետո 17 տարի ևս շնորհեց: Հույս ունեմ, որ իմաստուն գտնվեց և ընդունեց Տեր Հիսուսին որպես անձնական Տիրոջ ու Փրկչի, նախքան երկրի վրա աչքերը փակելը: Նրա անունը պրոֆեսոր Մոս Սիսակյան էր, և Երևանի փողոցներից մեկում նրա ապրած շենքի վրա գտնվում է նրա հուշատախտակը:

Վիզեն Խաչատուրյան

---

«Այս տողերը կարդացող յուրաքանչյուր ընթերցողի կպատվիրեմ, որ ինքն իրեն հաճախ հարցնի, թե Աստվածաշունչն ի՞նչ նշանակություն ունի իր համար: Արդյո՞ք այն Աստվածաշունչ է, որտեղ բարոյական լավ նորմերից և առողջ խորհուրդներից բացի բան չի գտել, թե՞ այն մի գիրք է, որում գտել է Քրիստոսին: Արդյո՞ք այն մի Աստվածաշունչ է, որտեղ Քրիստոսն է ամենը ամենի մեջ: Եթե ոչ, հստակ ասեմ ձեզ՝ մինչ օրս ձեր Աստվածաշունչը շատ քիչ նշանակություն է ունեցել ձեզ համար: Դուք նման եք այն մարդուն, ով ուսումնասիրում է արեգակնային համակարգը և իր ուսումնասիրության մեջ բաց է թողնում արևի ուսումնասիրությունը, որ բոլորի կենտրոնն է: Զարմանալի չէ, որ ձեզ համար Աստվածաշունչը ձանձրալի գիրք է»:

Ջ. Ս. Ռայլ

## **Հույս՝ անհույսների համար** **(Մարկոս 5.21-34)**

**Ե**րբևէ հայտնվե՞լ ես անհուսության վիճակում: Եթե նույնիսկ աղքատ, հիվանդ կամ միայնակ չես, հավանաբար կյանքիդ ինչ-որ պահի հուսահատության զգացում ես ունեցել:

Սողոմոն թագավորն աշխարհի ամենահարուստ և իմաստուն մարդկանցից էր: Նա միշտ շրջապատված էր մարդկանցով, այդուհանդերձ, մենք կարողում ենք նրա անհուսության մասին.

«Եվ ես ատեցի կյանքը, որովհետև զզվելի էին ինձ համար արեգակի տակ եղած գործերը, որովհետև ամենը ունայն է և քամու աշխատանք... Եվ ես հետ դարձա, որ սրտիս հույսը կտրեմ արեգակի տակ աշխատած բոլոր աշխատանքիցս» (Ժող. 2:17, 20):

Անհուսությունը ներկայիս հիմնական խնդիրներից է: Սովորաբար այն ընտանեկան կամ անձնական խնդիրների, աշխարհի քաղաքական, շրջակա միջավայրի և տնտեսական իրավիճակների ու հանցանքի արդյունք է: Ամենուրեք կորչում են իշխանություններն ու մարդիկ: Նրանք անօգնական են. սպասում են, որ ինչ-որ առաջնորդ կամ խումբ որևէ բան կանի:

Շատերը կասեն, որ այլևս հույս չունեն: Անհուսությունը վարակիչ հիվանդության նման է, եթե այն չես կանխարգելում ու վերափոխում, այն տարածվում է շուրջբոլորը:

Բազմաթիվ մարդիկ կորցրել են ապրելու ցանկությունը: Ի՞նչն է պատճառը: Շատ տարբեր պատճառներ կան, բայց Աստվածաշունչը մատնացույց է անում անաստվածությունն ու անհնազանդությունը: Պողոս առաքյալը Եփեսոսի քրիստոնյաներին գրում է.

«Հիշեցե՛ք, որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք... հույս չունեիք և անաստված էիք աշխարհում...» (Եփես. 2:12):

Աստծո նախազգուշացումը բարձրաձայն է ու հստակ.

«Բայց եթե քո Եհովա Աստծո ձայնը չլսես և չպահես ու չանես նրա

բոլոր պատվիրանները և կանոնները, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ, այն ժամանակ այս ամեն անեծքները քեզ վրա կգան և քեզ կհասնեն» (Բ Օր. 28:15):

«Եվ կյանքդ քո առջև կախման մեջ կլինի, և գիշեր-ցերեկ կվախենաս ու կյանքումդ ապահով չես լինի: Առավոտը կասես. «Երանի թե իրիկուն լիներ», և իրիկունը կասես. «Երանի թե առավոտ լիներ», սրտիդ ահուդողից և աչքերիդ տեսած բաներից» (Բ Օր. 28:66-67):

Այս հատվածը ճշգրտությամբ նկարագրում է ներկայիս մարդկանց վիճակը, այնպես չէ՞: Կա՞ արդյոք ելք անհուսությունից: Այո՛, Աստված խոստացել է, որ՝

«այս բոլոր օրհնությունները քեզ վրա կհասնեն, եթե քո Եհովա Աստծո ձայնը լսես» (Բ Օր. 28:2):

Հիսուսը նույնպես խոստացել է.

«Եվ տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր և աղաղակեց. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ով ինձ հավատա, ինչպես Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրի գետեր պիտի բխեն» (Հովհ. 7:37-38):

Հիսուսը կյանքի ջուրն է, միակ հույսը, շատերը չեն հասկանում կամ հավատում Նրան: Բայց Նրան հավատացողները հույս և բժշկություն, խաղաղություն են գտնում: Վառ օրինակն այն կինն է, որին Հիսուսը բժշկեց (տե՛ս Մարկ. 5-րդ գլուխ): Կինը հավատով դիպավ Հիսուսին, ոչ թե մյուսների մման կանգնեց Նրա կողքին: Այդ հպումը վերափոխեց նրա կյանքը: Ի վերջո՝ նա չկարողացավ իր այդ փոփոխությունը գաղտնի պահել: Քրիստոսին հանդիպելուց հետո անհետացավ այդ կնոջ անհուսությունը. քոնն էլ կարող է անհետանալ: Հիսուսը թերևս չփոխի քո իրավիճակը, բայց կփոխի և կբժշկի քեզ:

Վեր. Հովսեփ Հովսեփյան



## Մահից հետո

**Պ**ատերազմի ժամանակ մի երիտասարդ զինվորագրվեց և պետք է պատերազմի գնար: Հրաժեշտի պահին մայրը Նոր Կտակարան դրեց որդու ձեռքի մեջ և, արցունքներն ու աղոթքներն իրար խառնած՝ ասաց՝ գնաս բարով:

Վշտահար մայրը կրկին պատվիրեց, նաև խնդրեց, որ այդ փոքր գիրքն ամեն օր կարդա և դրա պատվերներին հնազանդվի: Ավելացրեց նաև այս խոսքը՝ թե՛ տուն վերադառնա, թե՛ պատերազմի դաշտում մեռնի, ամեն բան անշուշտ լավ կլինի, եթե այդ փոքր գրքի լույսին հետևի և պատվերներին հնազանդվի:

Երիտասարդը տնից հեռանալուց հետո բազմաթիվ պատերազմների մասնակցեց՝ ոչ մի օր չկարդալով իր Նոր Կտակարանը: Մի օր ամբողջ բանակը պատրաստվում էր ամենասուսկալի հարձակմանը, և հրամանատարը հրահանգներ տվեց զինվորներին՝ ասելով.

- Հիմա գորացե՛ք և քաջասի՛րտ եղեք: Ձեզանից շատերը չեն վերադառնալու: Սակայն մինչև վերջ հավատարի՛մ եղեք ձեր պարտականությանը:

Այս երիտասարդի դեմքը մեռելի դեմքի պես դեղնած էր, և նրա ընկերները ծաղրում էին նրան՝ վախեցած երևալու համար: Նրանք այսպես էին ասում.

- Այս անգամ քեզ բռնելու են, ո՛վ տղա: Գու մահից վախենում ես, այնպես չէ՞:

Սա լսելով՝ նա իր Նոր Կտակարանը հանեց և ասաց.

- Երբ տնից դուրս էի գալիս, մայրս պատվիրեց, որ սա կարդամ ամեն օր, ես էլ այդպես անել որոշեցի և այդպես անել խոստացա: Սակայն դեռ ոչ մի անգամ չեմ բացել այն: Եթե Նրա լույսին և պատվերներին հետևեմ, ամեն բան լավ կլինի: Սակայն Նրա լույսը և պատվերները չգիտեմ, քանի որ դեռ չեմ կարդացել Գիրքը: Հիմա պատերազմի եմ գնում այն սուսկալի մտածմունքով, որ միգուցե ողջ

չվերադառնամ: Ո՛չ, բարեկամներ՛ր, մահից չէ, որ վախենում եմ:

Մի քիչ դադար տվեց և խորապես հուզված սրտով բացականչեց.

- Ո՛վ իմ Աստված, մահից հետո ի՞նչ է լինելու ինձ հետ՝ ես դրանից եմ վախենում, քանի որ դրա համար որևէ պատրաստություն չունեմ:

Սա ճիշտ չէ՞: Ամեն մարդ գիտի, որ մահից հետո անվախճան և հավիտենական կյանք կա: Գերեզմանը մեր գոյության վախճանը չէ, հապա դուռ է, որն անվերջ կյանքի է առաջնորդում: Թեև մահը զարհուրելի է, սակայն ոչինչ է երկրորդ մահի համեմատ:

Ընթերցո՛ղ, դու պատրա՞ստ ես այդ կյանքի համար: Միայն Հիսուսն է դուռը, որ մահից հետո հավիտենական ուրախության կտանի քեզ: Դու գտե՞լ ես Նրան: Նա կանչում է քեզ և սպասում: Դու երբեք ապահով չես, ոչ էլ կարող ես ապահով լինել, եթե հենց այսօր չապաշխարես:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու հոգևոր պատմությունների» գրքից

## Խաղաղություն

**Ժ**ամանակին մի թագավոր խոստացավ մեծ մրցանակ տալ այն նկարչին, որը կկարողանա լավագույն կերպով պատկերել խաղաղությունը: Բազմաթիվ արվեստագետներ մասնակցեցին մրցույթին: Սակայն թագավորը միայն երկու պաստառ հավանեց և պետք է դրանցից մեկն ընտրեր:

Նկարներից մեկի վրա պատկերված էր հսկայական լեռներով շրջապատված մի հանդարտ լիճ, որը խաղաղություն էր արտացոլում: Վերևում կապույտ երկինքն էր՝ ճերմակ բրդի նման ամպերով: Այս նկարը տեսնողները մտածեցին, որ հենց սա է խաղաղությունը պատկերող կատարյալ տեսարանը:

Մյուս պաստառի վրա պատկերված էին սեզ լեռներ, սակայն դրանք

կոպիտ էին և խոպան: Վերում մռայլ երկինքն էր, որտեղից անձրև էր տեղում, և փայլատակում էր կայծակը: Լեռների լանջից փոփոռոջ ջրվեժ էր իջնում: Սա բացարձակապես խաղաղություն չէր պատկերում: Սակայն երբ թագավորը դրան նայեց, մի փոքր թուփ տեսավ ջրվեժի հետևում, որ աճել էր ժայռերից մեկի խոռոչից: Այս մացառում մայր թռչունը բույն էր շինել և ջրի ուժգին հորձանքի մեջտեղում անհոգ և ուրախ նստել էր իր ձագուկների հետ:

Թագավորը երկրորդ պատասառն ընտրեց՝ բացատրելով պատճառը. «Խաղաղություն չի նշանակում վայր, որտեղ չկա աղմուկ, նեղություն և դաժան աշխատանք: Իրական խաղաղությունը ներքուստ հանդարտ մնալն է այդ բոլորի մեջ լինելով: Սա է խաղաղության իսկական իմաստը»:

Միրելի՛ ընթերցող բարեկամ, արդյոք քո խաղաղությունը ներքի՞ն, թե՞ արտաքին պարագաներից է կախված: Հիսուսն է Խաղաղության Իշխանը: Երբ Նա է քո Տերն ու Փրկիչը, դու միշտ հանդարտ և խաղաղ ես լինում ու չես ազդվում շուրջդ տիրող դժվարություններից, ձախորդություններից, հիվանդություններից կամ փորձանքներից:

«Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է, պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով» (Փիլ. 4:6-7):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

«Վերջապես, եղբայրներ՛, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ հարգանքի արժանի է, ինչ որ արդար է, ինչ որ մաքուր է, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բարի համբավ ունի, ինչ առաքինություն և ինչ գովելի բան որ կա, դրանց մասին մտածեցե՛ք: Ինչ սովորեցիք և ընդունեցիք, լսեցիք ու իմ մեջ տեսաք, այ՛ն արեք. և խաղաղության Աստվածը ձեզ հետ պիտի լինի» (Փիլ. 4:8-9):

## Սեր, խնդություն, խաղաղություն

### Գաղատացիներին 5:22-23

**Պ**ողոս առաքյալը գրում է Գաղատիայի եկեղեցուն նրանց մարմնավոր գործերի, նախանձությունների, կռիվների, հակառակությունների, երկպառակությունների, բաժանումների մասին, ապա ասում. «Բայց Հոգու պտուղն այս է...»: Ինչպե՞ս կարող է եկեղեցուն մարմնավոր գործեր լինել: Մի՞թե նրանք հավատացյալներ՝ Աստծո զավակներ չէին: Երբ Աստծո Խոսքը սերտենք, կտեսնենք, որ երբ Աստված նայում է մարդկանց, տեսնում է միայն մեղավորին և փրկվածին, հավատացյալների մարմինը և մեղավորների խումբը: Նա ուրիշ բաների չի նայում: Իսկ երբ սերտենք Նոր Կտակարանը, հատկապես Հռոմեացիներին թուղթը, կտեսնենք, որ մարմնավոր հավատացյալներ կան, որոնց հաշիվները, հարաբերությունը մարմնավոր սկզբունքների վրա է հիմնված: Նրանք փրկված են, բայց դեռ Սուրբ Հոգու լիությունը չունեն: Նրա կամքն ու ապրելակերպը Սուրբ Հոգու չեն կառավարվում: Երբ եկեղեցուն կռիվներ, բաժանումներ կան, այդ եկեղեցին մարմնավոր հավատացյալներով լի է, բայց երբ Հոգին տիրում է մարդու սրտին, արդյունքը Սուրբ Հոգու պտուղն է լինում, և դա արտահայտվում է ինը հատկանիշներով: Աստվածաբաններն այս ինը հատկանիշները երեք մասի են բաժանել: Առաջին երեքը առընչվում են Աստծո հետ մեր ունեցած հարաբերությանը, մյուս երեքը՝ իրար հետ ունեցած մեր հարաբերությանը, իսկ վերջին երեքը՝ անձամբ հավատացյալին: Այսօրվա նյութը շեշտելու է առաջին երեք հատկանիշները:

Հոգու պտուղը սերը, ուրախությունը և խաղաղությունն է: Մրանք մեզ տրվում են Աստծուց, երբ մեր հարաբերությունը մտերմանում է Նրա հետ և ապրում ենք Նրա Հոգով: Ապրում ենք այնպիսի դարում, որտեղ սիրո մասին շատ է խոսվում, սակայն աշխարհը սիրո պակասից տառապում է: Ընտանիքներում սեր չկա, որովհետև Աստված ներկա չէ, ուստի բաժանումներ, քայքայումներ են պատահում: Առաքյալը խոսում է անձնագրի սիրո մասին, ոչ թե անձնակենտրոն.

դա ցանկության սերը չէ: «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց...»: Այսօր մարդկային սիրո շարժառիթը վերցնելն է, դիմացինի պատիվը, կարողությունները, կամքը, իրավունքները կողոպտելն է, և այս բոլորը՝ սիրո անվան տակ: Սակայն իսկական քրիստոնյան սեր է ցույց տալիս հարևանին, նրան, ով նոր է սկսել եկեղեցի հաճախել, և սա անում է առանց ակնկալիքի, որովհետև Աստված դնում Իր սերը քրիստոնյայի սրտի մեջ: Աստված Իր զավակներին սիրում է, ինչպես ծնողը զավակին, նույնիսկ եթե նա մոլորվի ու անառակ դառնա:

Պատմում են, թե մի բանտարկյալ տարիներ անց ազատվում է բանտից և շոգեկառքով տուն գնում: Ճանապարհին անհանգիստ է երևում և անդադար պատուհանից դուրս է նայում: Կողքը նստած ճամփորդը նկատում է նրա խռոված վիճակը ու հարցնում պատճառը: Բանտարկյալը պատմում է, թե ինչպես է երկար տարիներ բանտում անցկացրել, ասում է, որ ծերացած հայր, մայր ունի, որոնց աչքերը տկար են ու ինքնուրույն չեն կարողանում գրել իրեն, դրամ չունեին, որ այցելեին իրեն, և նույնիսկ չգիտեն՝ ինքը ո՞րչ է, թե՞ մեռած:

Երկու շաբաթ առաջ բանտարկյալն իր ծնողներին նամակ էր գրել: Նրանց տունը երկաթուղու դիմաց էր, ուստի նամակում ասել էր, որ եթե տակավին ողջ են, սիրում են իրեն ու չեն ամաչում իրենց որդու բանտարկությունից, եթե ուզում են, որ տուն վերադառնա, ապա թող սպիտակ ժապավեն կապեն բակում գտնվող ծառի կոճղին, որպեսզի շոգեկառքն անցնելու ժամանակ տեսնի՝ ծառի վրա սպիտակ ժապավեն կա՞, և լինելու դեպքում կայարանում իջնի ու տուն գա: Իսկ եթե չտեսնի, կհասկանա, որ իրեն չեն ուզում տեսնել, ուստի կշարունակի ճանապարհը՝ հաշտվելով այն գաղափարի հետ, որ այլևս հայր ու մայր չունի: Այս պատճառով մտահոգված էր և նայում էր պատուհանից՝ աչքերով փնտրելով սպիտակ ժապավենը: Կողքը նստած ճամփորդը հանդարտեցրեց նրան՝ ասելով. «Դու նստիր, իսկ ես քո փոխարեն կնայեմ և երբ մոտենանք, քեզ կհայտնեմ»: Զաղաքին մոտենալուն պես ճամփորդը պատուհանից տեսավ ծառը և բացականչելով ասաց.

- Ոչ միայն մեկ ժապավեն կա, այլ ամբողջ ծառը ծածկված է սպիտակ ժապավեններով:

Բանտարկյալն ուրախությամբ իր տուն գնաց: Հոգու սերը այսպիսի սեր է, թեև արժանի չենք: Երբ Սուրբ Հոգու սերը ունենք մեր մեջ, կարող ենք սիրել ուրիշներին, որոնք արժանի չեն սիրո:

Երբ սեր կա, խնդություն և ուրախություն էլ կա: Արդյոք այսօր մարդիկ աշխարհի վրա երջանի՞կ են: Երբ մեր նախահայրերի մասին են մտածում, հիշում են, որ նրանք մեր այսօրվա առատությունը, հանգստությունը և շռայլությունը չունեին, նրանք իրենց ընտանիքի անդամներով և պարագաներով մեկտեղ քչով էին բավարարվում և գոհունակ և ուրախ կյանք ապրում: Այսօր մարդիկ ուրախություն են փնտրում և դժբախտաբար ուզում են իրենց ներքին դատարկությունը արտաքին ուրախությամբ լցնել: Արդյոք մենք ունենք ներքին հագեցում, ուրա՞խ ենք, որ Տիրոջն ենք պատկանում, որովհետև Նա մերն է և մենք՝ Իրենը: Իսկական ուրախությունը միայն Քրիստոսին ճանաչելուց և Նրա պատվիրանները պահելուց է առաջանում: Երբ Հիսուսի աշակերտները գնացին Ավետարանը քարոզելու, ուրախությամբ վերադարձան՝ ասելով, որ չար ոգիները հնազանդվում են իրենց: Հիսուսն ասաց. «Մի՛ ուրախացեք նրանով, որ ոգիները ձեզ հնազանդվում են. այլ ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկրներում»: Դա է ամենամեծ ուրախության առիթը: Աստծո հետ հաղորդակցվելով և մտերմանալով՝ հավատացյալն ունենում է ներքին ուրախություն. վախը և մտահոգությունը փարատվում են, որովհետև նա իրեն ապահով է զգում Աստծո ձեռքում: Սուրբ Հոգով լի կյանքը մեզ տալիս է այն ուրախությունը, որ աշխարհի պայմաններն ու հանգամանքները մեզանից չեն կարող խլել:

Երրորդ հատկանիշը խաղաղությունն է: Արդյոք աշխարհում խաղաղություն կա՞: Միավորված ազգերի կազմակերպությունը խաղաղություն բերելու համար է հիմնվել: Տեսե՞՛լ եք այդ կազմակերպության հսկայական նկարը, որի վրա պատկերված է դուրսը կանգնած Հիսուսը, որ թակում է դուռը՝ ներս մտնելու համար: Նկարի նշանակությունն այն է, որ Հիսուսին դուրս են հանել և առանց Նրա փորձում են խաղաղություն բերել աշխարհին: Մի՞թե այս վիճակը մեզանից շատերի վիճակը չէ: Խաղաղություն ենք փնտրում ու չենք փնտրում խաղաղություն տվողին: Առաքյալն ասում է. «Հետևաբար հավատով արդարացած լինելով, խաղաղություն ունենք Աստծո

հետ»։ Իսկական խաղաղությունը, որին կարոտում ենք, Աստծո տրված խաղաղությունն է։ Այն մարդը, ով Աստծո հետ խաղաղություն չունի, իր անձի հետ խաղաղություն չունի։ Եվ եթե մեկն իր անձի հետ խաղաղություն չունի, ուրիշի հետ խաղաղություն չունի։ Առաքյալն ասում է, որ Աստծո խաղաղությունն ամեն մտքից վեր է։ Նա քո Հայրն է, դու Նրա զավակն ես. Նա է Իր խաղաղությունը սրտիդ մեջ դնողը։ Արդյոք կարո՞ղ ենք հասկանալ, թե ինչ է այդ խաղաղությունը։ Որքա՞ն մեծ աստվածային պարզև է ներքուստ խաղաղ ապրելը այս խռոված ու շփոթված աշխարհում։ Խոսքս բնավորությամբ հանդարտ եղողների մասին չէ, այլ Աստծո տված խաղաղության մասին է, երբ Աստծո Հոգին ապրում է քո մեջ, կյանքի դժվար պարագաները չեն վրդովում քեզ։ Այո՛, հոգիդ պլեկոծվում է, ազդվում ես, քանի որ զգացումներ ունես, բայց Նրա Հոգին ավելի զորավոր է և տիրում է քո զգացումներիդ վրա՝ հանդարտեցնելով քեզ, ուստի կարողանում ես ասել. «Տերը տվեց, Տերը վերցրեց, օրհնյալ լինի Տիրոջ անունը»։ Երբ Տիրոջը հանձնենք ամեն բան, Նա լավագույնը կանի։ Իսկական և ներքին խաղաղությունը Տիրոջից է գալիս։

Վեր. Հապիպ Ալաճաճի  
Քաղված՝ «Հատրնտիր հոգևոր պատգամներ» գրքից

## **Ջիջող հավատացյալը**

**Ռ**ոկտ. Հովփինսը՝ նշանավոր քարոզիչը ու աստվածաբանը, ցավոք սրտի, շատ ջղային անձնավորություն էր։ Մի փաստաբան քենակալ ուներ, որ անհավատ էր և հակաքրիստոնյա։ Միշտ ասում էր իր ընտանիքին, թե Հովփինսն իրենից ավելի լավը չէ։ Միակ տարբերությունն իր և դոկտ. Հովփինսի միջև քրիստոնյա լինելը կամ չլինելն է։ Մի օր ասածը գործնական կերպով էր փաստելու։ Երեկոյան քարոզիչն իր անհավատ քենակալի տուն եկավ՝ մի շարք հարցեր հարթելու, որոնք երկուսին էլ հետաքրքրում էին։ Երբ խոսակցությունն ավարտվեց, հյուրասենյակ անցան՝ ընտանիքով ընկերային ժամանակ անցկացնելու։ Փաստաբանն իր լարած ծուղակի մասին էր մը-

տածում: Որոշ ժամանակ ամեն բան լավ ընթացավ: Միրո մթնոլորտում ազգականները հաղորդակցվում էին իրար հետ: Հոփքինսը տեղյակ չէր անհավատ քենակալի չար ծրագրերից: Փաստաբանն անմեղորեն խոսակցության ուրիշ նյութ բացեց: Որոշ բաներ ասաց, որ բոլորովին հակառակ էին քարոզչի մտածելակերպին: Խոսակցությունը վիճաբանության վերածվեց, և գլուխները տաքացան: Փաստաբանը սկսեց զրպարտել քարոզչին՝ նվաստացնելով վերջինիս պատիվը: Միջամտելով՝ կանայք չկարողացան վիճաբանությունը հանդարտեցնել: Հոփքինսը չզսպեց իր նյարդերը և սկսեց բղավել: Քիչ անց գլխարկը վերցրեց և, առանց «բարի գիշեր» ասելու՝ դուրս եկավ: Դուռը հետևից այնպես ուժգին փակեց, որ տունը ցնցվեց: Անհավատն իր նպատակին հասավ: Հաղթական նայվածք նետեց իր ընտանիքին ու ասաց.

- Հիմա հավատացի՞ք, որ որևէ տարբերություն չկա երկուսիս միջև: Ես չղայնացա, բայց նա ջղայնացավ: Ես չգռռացի, բայց նա գռռաց:

Այդ գիշեր դոկտ. Հոփքինսը չկարողացավ քնել: Գիշերն անցկացրեց աղոթքով ու խոստովանությամբ: Առավոտյան քենակալի տուն գնաց, ընտանիքը հավաքեց ու արցունքներով խոստովանեց նախորդ գիշերվա բարկությունը: Որևէ բան չհիշեց ասված զրույստությունների մասին: Չհիշեց, որ քենակալն իր անտեղի խոսքերով գրգռել էր ու պատճառ էր դարձել իր ջղայնանալուն: Երբ քարոզիչը գնաց, անհավատն ինքնիրեն ասաց. «Քենակալս մի բան ունի, որ ես չունեմ, և այն աստվածային է»: Մուրբ Հոգին փաստաբանին համոզեց, փշրեց, ու նա ապաշխարեց: Որոշ ժամանակ անց հոգևոր գործչի կոչում ստացավ ու նշանավոր քարոզիչ դարձավ:

Երեսուն տարի անց մի առիթով դոկտ. Հոփքինսը հայտարարեց, որ այն օրից Աստծո շնորհքով որևէ բան չէր կարողացել իր նյարդերը գրգռել: Ջղային հավատացյալները թող օրինակ վերցնեն այս քարոզչից:

Քաղված՝ «Օրհնաբեր նոնենին» գրքից